

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/4

15 հունվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Կարապետ Թոսունյանի 15.12.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 01.12.2015 թ-ի թիվ 5102483 ակտի դեմ:

#### Ա/Ձ Կարապետ Թոսունյանի գանգատում բերված փաստարկները.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 15.10.2015թ. թիվ 5102483 հանձնարարագրի իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որի արդյունքում 01.12.2015թ. կազմվել է թիվ 5102483 ակտը (այսուհետ՝ Ակտ):

Ակտում նշված է, որ ավագ հարկային տեսուչ Գոռ Անդրեասյանի կողմից 11.11.2015թ. ժամը 08:05-ին ք.Քաջարան, Շիրվանզադե 7-ի դիմաց գտնվող հացաթխման արտադրամասից կատարված գնումը նդհանուր 1100 դրամի չափով՝ 10 հատ լավաշ և 2 հատ հաց, որի դիմաց հացթուփա-բանվորուհի Արմինե Ղահրամանյանի կողմից համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց, քանի որ արտադրամասում տեղադրված չէ հսկիչ-դրամարկղային մեքենա: Արդյունքում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի համաձայն նշանակվել է տուգանք 300 000 դրամի չափով:

Գանգատաբերը նշում է, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ 1. Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառաբեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ քնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Տվյալ դեպքում գնումը կատարվել է հացի թխման արտադրամասից, ինչի մասին նշված է նաև ակտում, իսկ արտադրամասը առևտրի իրականացման վայրերի շարքին չի կարող դասվել, ուստի արտադրամասում հսկիչ-դրամարկղային մեքենայի տեղադրումը պարտադիր չէ:

Եթե անգամ ընդունենք, որ արտադրամասում հսկիչ-դրամարկղային մեքենայի տեղադրումը պարտադիր է, ապա այս դեպքում ևս ակտը կազմվել է օրենսդրության պահանջների խախտմամբ, քանի որ Ա/Ձ Կարապետ Թոսունյանի 2013 թվականի տարեկան իրացման շրջանառությունը կազմել է ավելի քան 19,7 մլն դրամ:

Այսինքն՝ հիմք ընդունելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, Ակտով պետք է կիրառվեր ոչ թե տուգանք, այլ՝ նախազգուշացում:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և Գանգատարկման հանձնաժողովի այս հարցի վերաբերյալ ընդունված որոշումները Ա/Ձ Կարապետ Թոսունյանը խնդրում է Կապանի ՏՀՏ կողմից 01.12.2015թ.-ին կազմված թիվ 5102483 ակտը ճանաչել անվավեր:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 15.10.2015թ-ի թիվ 5102483 հանձնարարագրի Ա/Ձ Կարապետ Թոսունյանի մոտ իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 01.12.2015թ. կազմվել է թիվ 5102483 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ավագ հարկային տեսուչ Գոռ Անդրեասյանի կողմից 11.11.2015թ-ին ժամը 08:05-ին ք.Քաջարան, Շիրվանզադե 7-ի դիմաց գտնվող Ա/Ձ Կարապետ Թոսունյանին պատկանող հացաթխման արտադրամասից կատարվել է գնում, ըդհանուր 1100 դրամի չափով, այն է՝ գնվել է 10 հատ լավաշ և 2 հատ հաց, որի դիմաց հացթուփա-բանվորուհի Արմինե Ղահրամանյանի կողմից համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել, քանի որ արտադրամասում տեղադրված չէր հսկիչ-դրամարկղային մեքենա: Ստուգմամբ պարզվել է, որ արտադրամասից աշխատակիցների միջոցով իրականացվում է առևտուր կանխիկ դրամով: Տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Արդյունքում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի համաձայն առաջադրվել է տուգանք՝ 300 000 դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ 1. Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատների միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Քննարկվող դեպքում Ակտի 2-րդ կետում հիշատակված գնումը կատարվել է հացի թխման արտադրամասից, ինչի մասին նշված է նաև ակտում, իսկ

արտադրամասը առևտրի օբյեկտի կամ առևտրի իրականացման վայրի վաճառատեղի շարքին չի դասվում:

Այսպես, առևտրի օբյեկտի և առևտրի իրականացման վայրի վաճառատեղի սահմանումները տրված են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի 2-րդ հոդվածի համաձայն առևտրի օբյեկտը դա գույքային համալիրն է (հողամաս, շենք, կառույց), որն օգտագործվում է ապրանքների առուվաճառքի համար, իսկ առևտրի իրականացման վայրի վաճառատեղը, դա առուվաճառքի պայմանագրով գործարքներ կատարելու համար օգտագործվող տեղն է:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Կարապետ Թոսունյանի 2013 թ-ի տարեկան իրացման շրջանառությունը կազմել է ավելի քան 19,7 մլն դրամ, հետևապես ՀՀ կառավարության 05.09.2013թ-ի թիվ 968-Ն որոշման 1-ին կետի համաձայն ՀԴՄ-ի կիրառումը պարտադիր լինելու դեպքում Ա/Ձ Կարապետ Թոսունյանի կողմից պետք է կիրառվեր նոր սերնդի ՀԴՄ: Սակայն, համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթների նոր սերնդի ՀԴՄ չներդնելու համար առաջին անգամ կիրառվող պատասխանատվությունը ոչ թե 300.000 դրամ է, այլ՝ նախազգուշացում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Կարապետ Թոսունյանը հացաթխման արտադրամասում հսկիչ-դրամարկղային մեքենա տեղադրելու պարտականություն չի կրել, հետևապես կիրառելի չէ նաև «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված պատասխանատվությունը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Չ Ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կապանի ՏՀՏ 01.12.2015 թ-ի թիվ 5102483 ակտի 2-րդ կետը:

Հանձնաժողովի նախագահ՝

  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

